

ՏՆՕՐԵՆ - ԽՄՈՒՎՐՈՒՊԵՏ

Հ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺՍՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵՆՆ 500 ՂՐԵ
ՎԵՅԱՍՏԵԱՑ 250
ԵՐԱՍՏԵԱՑ 150

Քառասորագրութիւնը կ'սկսի
ամեն ամսոյ 1 ին և 35 ին



Fondateur

M. Mamourian

Directeur - Rédacteur en chef

H. MAMOURIAN

ARÉVÉLIAN MAMOUL,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

100 ՓԱՐԱ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՎԱՂԱՔԱԿԱՆ

100 ՓԱՐԱ

ՏԵՍՈՒՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ.

Մենք չենք մերժել Յեղափոխական կուսակցութիւններու զոհողութիւնները համաշխարհային պատերազմի ընթացքին: Կ'ընդունինք թէ անոնք ամեն տեսակ զոհարարութիւններու յանձնառու եղան և յաջողեցան Հայ կամաւորական գունդերով, Ռուսական բանակի կողմին և Ռուսական նահանջին ետք անյուշալի ծառայութիւններ մատուցանել:

Բայց և այնպէս անոնք իրենց պարտքը կատարեցին, այլապէս չէին կրնար շարժիլ, երբ մանաւանդ թրքահա, ժողովուրդը կ'ենթարկուէր անլուր և աներեւակայելի տառապանքներու և հարկեր հազարաւոր զոհեր կուտար ինքնատի ոճրապարտ կառավարութեան և Գերման բարբարոսութեան:

Թուրքոյ Հայ ժողովուրդը գոտարարուած էր կրելու իր Գողգոթան, դէպքերն ու պարտգաններն, ստեղծուած կացութիւնն, արտասահմանի Հայութեան շարժումը, Ռուսական կրօնական գիտնականները ճակատագրականորէն ազդած էին թրքահայոց վրայ և պիտի ազդեն ներքին գաղանները զարմանակալ կ'սպասէին անոր վրայ ինչպէս և պատուելու:

Անոնք իրենց ճիշտագոյն ծրարքին մէջ յաջողեցան և միջոցի մը շտի Հայեր փնտցեցին, որք' այսօր Հայութեան լեկորներուն համար, թիչ կ'ընէ մնացորդ այն հայութիւնը: Իր հերոսութիւններուն պատմական կուսակցութեան օր մեզի ընել, որպէս թէ՛ այդ հերոսական շարժումներն ու արարքները պարտականութիւններ չըլլային՝ այլ շնորհներ:

Եթէ անոնք պատերազմի դաշտերուն վրայ զէն ի ձեռք մարտիրոսացան, թրքահայութիւնն ողջակիզուեցաւ իր հայրենիքին համար, որովհետև կաշկանդուած էր, շղթայուած ու իր վրէժները վրայ կ'ստեղծուած ունէր զանազան տարրերով վտանակներ:

Ուրեմն երկուստեք իրենց զիրքին ու կացութեան ընդամենը ամեն ոք կատարեց իր պարտականութիւնը:

Կ'ստիպուինք յիշեցնել այս շատ նուրբ կէտերն, որովհետև վերջնապէս շատ ու քիչ մըն ալ չափազանցեալ կերպով կ'յիշուելու Հայկական կամաւորներու, չենք ուրանար, իրական քաջագործութիւններն, միշտ այս կամ այն կուսակցութեան վերին ուղղութեամբ, առանց կարեւորութեան տալու թուրքոյ Հայոց կորուստներուն որոնք սահմակցուեցին, անարկու, անաւոր գրուածներ կ'պարտունակին:

Այնպէս կ'կարծենք թէ՛ այլևս վերջ գտնելու են կուսակցութեանց կողմէ, այս համեմատ հերոսամարտերու կրկնութիւններն, որոց միակ նպատակն է ժողովուրդն շրջանելու և թմբկահարելու, և միւս կողմէ անոր համակրանքին առարկայ դառնալ, ստուարացնելու համար անստուար շարժերը:

Այնուչառ ազատ է ամեն ոք իր սկզբունքներուն ծառայելու, ազատ է ամեն մարդ իր գաղափարներուն ու մտածումներուն գերին զաւանջուլ, ոչ ոք կրնայ բռնաբարել ուրիշ մը խորհելու ու գործելու. եղանակը, սակայն երբ աչքի առջև ունենանք թէ՛ այդ միևնոյն նպատակակէտներէն առաջնորդուելով, այսօր արտասահմանի մէջ, թէ՛ Ամերիկա, թէ՛ Եվրոպա, թէ՛ Կովկաս, թէ՛ Հայկական հանրապետութեան մէջ և թէ՛ նոյն իսկ Բարկու մէջ ի լուր աշխարհի, ի լուր օտարներու կ'մտնուող արտաստ պայքար մը, ամեն շահելու և գերակշիռ դիրք մը բռնելու համար, չենք կրնար մեր ցասումը զսպել և կր հարցնենք թէ՛ այսպէս կ'ըմբռնեն հայրենի սէրը, այսպէս կ'հասկանան Հայաստանի մը ապագայ կազմակերպութեան համար՝ թափուելիք աշխատութիւններուն ու զոհարարութիւններուն կողմէ:

Մենք և մեզի նման ամբողջ Հայ ժողովուրդը կ'սպասէր ու կ'սպասէ որ մեր անցեալի կուսակցութիւններն եթէ ոչ լուծուին, գոնէ ձերբազատուին յեղափոխական յատկանիշներէն և գաւառն քաղաքական կուսակցութիւններ, որոնք ծրագրով, որոնք ուղղութիւններով, գաւառնաբնակներով և հիմնադրութիւններով, որովհետև յեղափոխական բռն շատ գաւառ կ'հնչէ ժողովուրդի սկզբունքներուն և մանաւանդ Գաղափարութիւն, Հնչակեանութիւն, Վերակազմակալ Հնչակեան հին օրերն կ'յիշեցնեն և ցուրտ ապստորութիւն մը կ'թողան մեր վրայ: Միևնոյն չենք կրնար ըսել Բոսնիական կուսակցութեան մասին, որ Օսմ. Սահմանադրութիւնէն վերջ ծագում առաւ և հակառակ զուստ քաղաքական ձգտում մը ունենալու ն մեծ գործունէութիւն մըն ալ չունեցաւ, իր անկազմակերպ վիճակին բերումով:

Այս քանի մը միջանկեալ ցուցմունքներէն վերջ, պիտի հարցնենք թէ ո՞ր է և ո՞ր գաւառն է շարունակ շատագոյնուած սա համերաշխութիւնը:

Մենք գործադարար չենք գտնել որ և է միջավայրի մը մէջ այդ համերաշխութիւնն, որովհետև ինչպէս ըսինք, թագուս և այնպէս ու թեր ամեն ճիշդ կ'թափան Հայկական կուսակցութիւններէն որ ապագայ ուղղութիւնն, միշտ յանուն ժողովուրդին, չմտնանք ըսելու, իրենց ամբողջ մէջ կեդրոնացնելու, այսօր կ'հարուստուի որ և է ազգային մարմին մը, չորաշար կ'ըմբռնատուր անոր ուղղութիւնն, միջառ և որ յաջողութիւն ձեռք բերուի այդ մարմիններն ջլտուելու և սպարեղէն հեռացնելու, վաղը կ'հարուստուի Հ. Բ. Բ. Միութիւնն, գայն հանձն - աղայական անուանելով և զարմանալի կ'թուի հարուստողներուն թէ՛ ինչպէս այդ հանձն - աղայներն այդքան պիտի փարած ու կուսած կ'մնան իրենց Միութեան և այնքան հարուստուելէ յետոյ, չեն թողուր հեռանար, անշուշտ փոխանցելէ յետոյ Միութեան անշարժ ու շարժումն գոյգե-

րը զիրենք քննադատողներուն հետատես ու ճարպիկ մտակարարութեան...
Դեռ ևս քաղաքականապէս չհաստատուած, սկսած ենք հարուստել կրօնական իշխանութիւնն և դարեւ ի վեր, Հայութիւնն սրտասնորդ, իր հայրենիքին հետ միութեան զիծը կազմող այդ հիմնադրութիւնն կործանելու և ժողովուրդի աչքին վարկաբեկելու տապալուքներ կունենանք, օտարներու ծաղրանքին ստարկայ դառնալով, առանց վարկեան մը իսկ ուշաբերելու թէ Համաձայնական ներկայացուցիչներն, այսօր կարեւորութիւն չեն տար, իբրև թէ քաղաքական գեանի վրայ հիմնուած մարմիններուն ու կրօնական իշխանութիւնները կ'ընդունին ներկայացուցիչ Հայութեան

Հ. Մ.

Անդրկովկասեան Անցիտեր

Անդրկովկասեան Հանրապետութիւնները և Զօր. Դէմիքին — Աղբրէջանք,
Երբ Մուսախոյ կուսակցութիւնը և Քաղաքի բանտոր թիւր —
Կով. Անցիտ Գրամատարութեան յայտարարութիւնը Ան-
դրկովկասեան հանրապետութիւններին — Կով-
կասեան հանրապետութիւններին զիրք դէպի
Զօր. Դէմիքին:

Զօր. Դէմիքինի կամաւորական բա-
նակը ամբողջ Հիւսիս. Կովկասին աւեր
գաւառուց յետոյ, սպասուած էր Ան-
դրկովկասեան հանրապետութիւններ-
ին — լուր ուղարկելով մասնաւորա-
պէս Աղբրէջանին և Վրաստանին —
որ առանց արիւն թափելու հին սահ-
մաններով իրան յանձնեն, յարատար-
րելով, ի միջի այլոց, որ Հայաստանի
զինուորները իր թիկունքի ապահովու-
թեան հաւատարիմ զինուորներն են:
Ահա այս սոթիւ, Աղբրէջանի կառու-
վարութիւնը իր սահմաններում ապ-
րող բոլոր ժողովուրդներին յայտա-
բարում է, որ — Հին սէփիմ ներկա-
յացուցիչ Դէմիքինը սպասուած է մեր
Հանրապետութիւնը ոտնատակ անել և
հին կարգերը վերականգնել, — ոյով
հրաւիրում է բոլոր ժողովուրդներին
մի մարդու պէս ծառանալ Դէմիքին-
եան արշաւանքների ղէմ: Թուրք
Մուսախոյի, չնայած որ հակադեմ-
ոկրատիկ մի ոճրագործ կուսակցու-
թիւն է — ինքնատի նման — իր
հերթին կը է անուժ Բաղուրի բանա-
որութեան պատրաստ լինելու Դէմիքին-
ի յարձակումների ղէմ: Սակայն, Բա-
ղուրի յեղափոխական բանտարութիւնը
որ շատ անգամներ ճաշակել է հակա-
յեղափոխական կուսակցութիւնների ու
կառավարութիւնների կողմ քաղաքա-
կանութեան գառնութիւնները. նա
այս անգամ չի լսում իրան ուղղուած
«արտացաս կոչելին ու առանց այլև
այլութեան ընդհ. ժողով են գումա-
րում, որով կը են անում Թիֆլիսի
բանտարութեան իրանց հետ միանալու
ընդհ. թշնամուն ղէմ կուսելու գոր-
ծում. բանտարական բո, որ կուսակցու-
թիւնները վերջնական սրտում են
տալիս ինչ գնով էլ լինի կուսել ի-
րանց շահերի թշնամիների ղէմ:

զսցման ղէմ կուսելու գործում, նա-
մանաւանդ որ ինք չընդապատուած է
թշնամիներով և թուրքերն էլ նոր
յարձակումներ են սկսել Օլթիի ուղ-
ղութեամբ: Այս յայտարարութիւնից
յետոյ, Աղբրէջանն ու Վրաստանը
Հայ հանրապետութեան նկատում են
որպէս իրենց թշնամի պետութիւն,
ու միայն խնդրում են Հայ հանրա-
պետութիւնից, որ գոնէ չեզոք մնայ...
Այո՛, Աղբրէջանն ու «Դէմիքիան»
Վրաստանը իրանց նեղ օրերին միայն
յիշում են Հայերին, նրանք շատ շուտ
մտածացան իրանց դաւաճան քաղա-
քականութիւնը, երբ հայութեան մնա-
ցած բեկորներին անմիջական վտանգ
էր սպասուած, որ ժամանակ Բա-
թումն ու Կարսը թուրքերին վաճա-
ռելուց յետոյ հրաւիրում էին Գեր-
մանացիներին ու Թուրքերին՝ Կով-
կաս Անդրկովկասեան Սէյմի ու Կով-
կասեան վարչապետների հետ խաչ
էին հանում հայութեան, Կովկասի
բանտարութեան ու գրեղացիութեան
շահերը ոտնատակ անում: Նախ քան
Գերմանացիների ու Թուրքերի Կով-
կաս մուտք գործելը Հայերը շտապում
են հեռանալ, Թիֆլիսից ու չընդունե-
րից սկսեցին գաղթել ղէպի Հիւսիս.
Կովկաս Գորետալի ճանապարհով (ուսի-
մով իրական գոյով) և այսպէս հարիւր
հազարաւոր գաղթականութիւն թափու-
ուեց Հիւսիս. Կովկաս Այս գուրումի
օրերին Վրաց հասարակութիւնն ու
թերթերը աչք էին փակել ու նոյնիսկ
անասել զժողովուրդներն յարուցին
ճանապարհներին:

Եւ ան այսօր երբ իրենց վտանգ
է սպասուած, անամթարար գիմում
են Հայ հանրապետութեան ու բոլոր
ժողովուրդներին որ միահամուտ ու
ժերով կուսեն սպասուած թշնամու
ղէմ:
Մի երկու խոսք Դէմիքինի կառու-
վարութեան մասին
Դէմիքինի կառավարութիւնը ներ-
կայացնում է Ռուսական հին սէփիւր-
տարութիւնը այն է, որ Նիկոլայի
տեղը թափուր է մնացել Ռուս ժո-
ղովրդի ոչ մի գոտակորդը այլևս չի
հանդուրժում բուն պետական սէփիւ-
րներին, և երբ Դէմիքինը հեռու է
հին սէփիւր. անա այս պատճառով
իր յառաջնորդացման քայլերը շա-
րունակ խոչնդաների է հանդիպում:
Դեռ սրանից երկու ամիս առաջ Բա-

ըրկըն Ռուս նախկին կառավարութեան արտաքին գործոց նախարար Սազոնովն և ուրիշ յայտնի անձնաւորութիւններ պաշտօնապէս յայտարարում են Ձօր. Դէնիքինի, որ բանւորներին ու գեղացիներին ազատ իրաւունքներ տայ, բոլոր ժողովուրդներին հաւասար աչքով նայի և յայտարարի հանրապետական կարգեր . սակայն Դէնիքին պատասխանում է որ, — դուք հետո Բարիգում նստած չէք իմանում մեր ներքին վիճակը, թողէք ինձ իմ գիտցած ձեռքով կառավարիմ:

Կասկած չկայ, որ Դէնիքին պէտք եղած յաղոթութիւնները չի գտնի, որովհետեւ, հին կառավարութեան ուժեղ պատգամը չունի իր ստանդարտի և քաղաքական հին կարգերի վերականգնումը: Թէկուզ քիչ ժամանակից յետոյ Դէնիքին տէր դառնայ Անդրկովկասին, նա այնտեղ երկար կեանք չի կարող ունենալ: Փաստեր: Նոյն որ Անդրկովկասին տիրապետող ցեղեր են թուրքերը, վրացիներն ու Հայերը և անա այս ազգութիւնները վաղ թէ ուշ գուրս կը վանեն Դէնիքին: Քանի որ նրա կառավարութիւնը չի տարբերում հնից, և չունի պահանջուած զինուորական ուժը որ կարողանայ զբաւակնուիլ անհիմն մի հակակառավարական շարժում, և վերջին ժամանակներս կամաւորական բանակը արդէն իր յոգնածութիւնը ցոյց էր տալիս . . .

(Շար.) ՎԱՐԴՊԵՏՍ

ՎԱՐԴՊԵՏՍԻ ԶՅՈՒՆ

(Շար.)

Վանքին բակը՝ պարսպին արեւելեան դրան ջով, մատուղի և հերիտայի կաթնասնորը կ'եռան. տնտեսաւոր կամարներուն տակ տոփահացները կը հայտնին՝ բոցավառ թոնիրին մէջ եփուլու համար: Անդին մեծ կաթնասնորը շուրջ հաւաքուածներուն ետացած կաթ կը բաշխեն կաթնասնորէն բարձրացող ծուխն ու շոգին, զոհարարութեան ձեռնները մոխիրուն հետ միացած՝ գործին ի վեր կը սլանան ուր արեւուն ճառագայթներուն տակ գործ թափանցիկ շղարչի մը կը վերածուէին:

Ու այս հանդիսութեանց շուրջը ամեն կարգի ու ամեն սեռի, ամեն տարիքի ու ամեն հասակի բազմութիւն մը կը վիտայ, կը պրուսայ, կը ճայ, հրմշտուք, իրարանցում, ձեռնկերութիւն, հայեցանք, լացի ձայներ, թեր ու դէմ ելնողներ, գաւազանի հարուածներ, դաշն . . .

Ու ներքը, տաճարին ծխացող ու նստ կամարներուն տակ՝ ժամերուութեանը սրբազան ու կերկրուն ձայնը քրտնաթոր պատարագիչին՝ խնդուած այս աղմկալի ամբողջի միտքէն՝ հազիւ լսելի կ'ըլլայ ունկնդիրներուն, որոնց յարաշարժ շրթունքներէն երբեմն անտեղի ու անճան «ամէն»ներ կը փրթին կցկտուր:

Վանահայրը փէշերը հաւքած ու թեւերը սօթթած, տաճարէ տաճար, սեղանէ սեղան կը վազվտէ, գանձանակներուն ու պնակներուն հասոյթները և սուրբերուն ոտքը փռուած թաշկինակներն ու քողերը ժողւելուն, որոնց քով մէյմէկ վստահելի պահապան կարգած է՝ յափտակիչ ախորժակները գոցելու կարող: Իսկ ժամկոչը մերթ դէպի զանգակները կը վազէ՝ «հաւատացեալ ժողովուրդին ժամերգութիւնը կամ աւելի ճիշդը՝ գանձապնակները յիշեցնելու և մերթ դէպի գեանաջահերն ու խաչարարը կը ցատկէ՝ վառուով մոմերը մարելու և ժողուելու համար:

Իրումն ներսի ու դուրսի այս խառնիճազան համադրութեան կ'արժէ յիշել մուրացիկները — տօնական այս շփացած հիւրերը — որոնք մէյմէկ խոշոր պարկ ուռած, բոկոտան կիսամերկ իրենց լաճերուն հետ կը

կը թալլէին լքուած ճաշակոյտներ մատուղի և մատագահացի մեծ մթերք մը ամբարկում իրենց կանակը, ցուցադրելով տեսարաններուն ամենէն անձուներն ու խայտոտակը: Ու ներսն ու դուրսը, գոնեւորն երկու քովերը: Ճամբաներուն և անցքերուն վրայ շրջուն ու կայուն վաճառորդներ, մեծ մատմբ պեղծուկ լուծեր առինքնող գոյնգոյն աւարկաներով ու շաքարեղէններով, կը լրացնեն աղմուկի ու ժխորի պակասը իրենց խայտարակ ձայներով ու կոտրերն ու կոտորանները, էչերն ու ձիերը անտանձ՝ անմաս չեն այս ընդհանուր գոն ու քոճէն, որ երբեմն կ'ընդհատուէր վերը ժայռերուն կատարը թառայ յիզափոխական երկատարներու խմբակին մարտական գոռ երգերէն և հըրազէններու համազարկին խլացուցիչ որտաւաններէն, որոնք ժայռէ ժայռ, ձորէ ձոր զարուբելով՝ երկարածիկ արձագանգ մը կը ձգեն՝ մինչև հեռուոր անդունդները տարածուող . . .

Վարդավառի տօնը, որուն տեղը

ՀԱՅ ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տիկ. Կարպիէի Քիւլպ վերջերսու էջուէրն է: քարտիկն մեջ սարեց յօնփեռանս մը ի պատիւ հայ ազգին, որ բաւական աղմուկ հանց: Հոյակաւոր վիպասանուհին բարեհաճած է Revue Mondiale ի տրանսպրոքեան սակ ղեկը իր աշխատութեան վերջին մասը, զոր սիրով կը հրատարակէ յիշեալ հանդէսը, որ 1895 է ի վեր կը պաշտպանէ ազգերու մեջ անհնազաժարողին դասը. . . Մ. Խ.

Ձիւնագոյարի զանգակները կը դրանջեն: Այն ճանապարհին վրայ ուր վաղեմի Հայաստանը ակնապիշ կ'դիտէ իր 600000 զաւակները, շարժուած թուրքերէ, կը տեսնուի ցաւապիտէն երկարող անհամար տարագիրներու կտրուանք, որ կը շարժի դէպի Միշագէտքի անապատները, կին մը կը ցցուի հոն, աչքերուն մէջ կը փայլի յոյսը և հպատութիւնը:

Հայաստան մահուան բոլոր երկուցներով կ'ներկայանար, սակայն ան կ'ապրէր, կ'ապրէր և մտքով և սիրտով:

Սիրտ մը որ տոգորուած էր ամենաանպատեհ, ամենէն ազնիւ և միութի կրօնական զգացումով, Գարեհու հալածանքի մէջ, հայերը ամենինչ գոհարարած են Քրիստոսի սիրտին և այս հաւատարմով շերմանողութիւնը իրենց անպարտելի ուժը եղած է. քանի որ ան կապ մը հանդիսացաւ և բոլոր երկիրներու մէջ զանոնք սերտորէն միացուց, զիրար ճանչցուց, և որ ամենքն ալ հաղորդեց իր մատուց, կը հաղորդէր նաև Հայրենիքին:

Եկեղեցին իր մէջ կը պարունակէ, ամբողջ անցեալը, ամբողջ ապագան և բոլոր երազները:

Անկիս փառք մըն է Հայաստանեաց եկեղեցիին համար, որ կըցած է այս բարոյական ուժը և որքեղ հմայքը օգտագործել խելուն համար Հայ ազգը թշուառութեան անասնացումէն, ազիտութեան և ստրկութեան ճիրաններէն:

Ժամանակաւ Եկեղեցին թշուառներուն երկիրը մատնանշած էր իբր գիրագոյն միլիթարանք անհանգստող համբերութեամբ մը, իրենց տարած այնքան ցաւերուն:

Այդ ժամանակը անցածէ, առաջին անգամ եկեղեցին եղաւ որ փնտաեց նոյն իսկ ազգին մէջ այն ուժերը որոնք պիտի կրնային արթնցնել և զրգուել Ազգային հպարտութեան զգացումը և անկախութեան տենչանքը:

Հոստուորից Քրիստոսի աշակերտութեան տօնը հաստատուած էր, գերագանցապէս հեթանոսական տօն մը ըլլալով, հայ ժողովուրդը երբեք չէ կըրցած մոռնալ իր նախաքրիստոնէական շրջանի սովորութիւնները և Ս. Գրիգորնի ու և Ներսէսներու բոլոր ջանքերը ապարդիւն եղած են անոր յիշողութիւնէն ջնջելու ազգային այս կայծածունք, որ ամեն տարի ամառուան կիսուն իր հոգնախառա ու բազմավաստակ դաշտային աշխատութիւններու հանգստի մէկ հանգրուանը կը կազմէ:

Հայ ժողովուրդը՝ տօնական այս հանգիստութեանց մէջ հարազատութիւն կը ցուցնէ մեր նախնի պարբեր ու հեթանոսական շրջանները, որոնց հետքերն ու մնացորդները պահած է ցարդ անկրօնաւ, մինչև. որ նոր ժամանակներու քաղաքակրթութիւնը բարձրացնելով անոր զարգացման մակարդակը՝ ի սպառ չնչէ, անհետացնէ այն բարքերն ու սովորութիւնները դարաւոր պատմութեան և ազգագրութեան նիւթ գործնելով զանոնք:

ԼԵՒՈՆ ԵՐԱՅՆԱՆ

տացի վանական մը, որ Միլիթար կը կոչուէր, ըմբռնեց թէ միայն մատուրական շարժում մը կրնայ բարձրացնել ցեղի մը բարոյական անկումը: Որովհետեւ անկարելի էր թուրք ըլլանակալութեան տակ հիմնել լուսաւորութեան վառարան մը, անցաւ վիտակ, իր հետ տանելով թանկագին հին ձեռագիրներ:

Այսպէսով Հային ունեցան վիտակի Միլիթարեան արքայադասին մէջ տպարան մը, զպրոց մը և թանգարան մը:

Ձեռագիրները մեկնաբանուեցան և այս մտացուած գանձերէն յարութիւն առաւ վաղեմի Հայաստանի ազգային գրականութիւնը:

Միլիթարի գիտնականներ եկան բոլորեւելու վեհապետի և վիտակի Միլիթարեան վանքերուն մէջ: Իրենց ուսումնասիրութիւնը ընդարձակուեցաւ: Արեւմտեան գրականութիւնը տարածելու Հայաստանի մէջ: Թուրք մտայնութեան ճնշուող զոյգ Փոքր-Ասիոյ անապատին մէջ տնոնք առաջնորդները եղան այն ըստ քանչելի կարասներն, որ իր մէջ ունի Հոմերոսի, Վիրգիլիոսի, Տանդէնի, Պոթնէյլերի, Պայրենի և գրականութեան այն սերը որ ժամանակին այնքան ուժգին էր բանաստեղծներու և արուեստագէտներու այս ժողովրդին մէջ, ստեղծագործ կը գտնուէր ոչ միայն բազմապատիկ գործերով որոնք ծնան Պոլսոյ և Կովկասի մէջ, այլ այն ազգային և գեղեցիկագիտական վիտակաւորականութեամբ մէկ տարուան մէջ հայ միտքը փոխակերպած է:

Այս միտքը եւրոպականացած է, շնորհիւ ընթացումներու, Պոլսոյ մէջ բացուած դպրոցներու, և յոյներու, իտալացուց, Ֆրանսացիներու, անգլիացիներու հետ ունեցած յաճախակի յարաբերութիւններու ազդեցութեան և այն բոլոր հայերը որոնք ստիպուած էին լիախել իրենց հայրենիքէն, կուգային հաստատել զգողութիւնը, զորս աշխատանքը և հնարամտութիւնը ամեն տեղ բարգաւաճ կը գարծնէին:

Եւրոպայի մէջ անոնք առին մշակոյթը և զարմանալի կերպով մը յարմարեցան անոր, մեր քաղաքական զարգացումները իրենցը կազմեցին, և ազատութեան շունչը որ Ֆրանսանկողնուէր, վերակենդանացուց բանաստեղծներու պետին. մարդոց, արուեստագէտներու, գործի մարդոց, նայն իսկ կրիտիկ մտքին մէջ անկախութեան փափաք մը և աւելի աղտաւիտ և յարգաւոր:

Ֆրանսական ազգայնութեան ներքեւայ միտքը ազատագրուեցաւ, Ռուսական ազգայնութիւնը անոր տուաւ ապստամբական ոգին: Ինձ համար անկարելի է այս ընդարձակ շարժումը ամփոփել որ ազգային զգացումի զարթոնքը յառաջ բերաւ և պատրաստեց Հանրապետութեան գաւառ, բունութեան լուծով շղթայուած եկրի մը մէջ: Թուրք պետութիւնը Հայոց ձեռքէն գէնքերը առտծ էր և անոնց առաջ փակած զինուորական սպարէզը: Հայերը ուրիշ գէնքեր գրուած են իրենց մտքի մշակութեամբ, և կրնանք ըսել թէ միտքը անգամ մը ևս յողթած է:

Դժբաղդ յողթանակ մը, որ Հայաստանի կուտայ աւերեալ երկիր մը, կրկին մը որ պարպուած է իր բնակչութիւնէն: Հոն ի՞նչ կը մտայ այժմ, կէս-միլիոն մը հազիւ: Սրկիր մը ուր անօթութիւնէ, հիւանդութիւնէ ցուրտէ կը մեռնին, ուր կրիտիկ զուրս նետուած թուրք հարէմներէ, մուրացիկներու պէս կը թափառին, իրենց թեւերուն մէջ սեղմելով իրենց զաւակը: Բայց թող զայ նրամանը, և Հայաստանը Համաձայնականներու հսկողութեան ներքեւ անցած, թող տեսնէ թուրքապետութեան և իր վարչեան անհետացումը: Թող Համաձայնականները իրենց ներկայութեամբ երաշխաւորեն ապահովութիւնը արեւելքի մէջ, այս երկիրը պիտի դառնայ ինչ որ ժամանակաւ էր: Ասիոյ Դրախար:

Ահաւասակ ինչ կը փափաքի ազնիւ և վեհանձն Հայաստան: Իր գահէն դէմ ան վրէժ չպոռթկար, շատիպէր որ անոր փոխվրէժ մը տան: Ան կ'ըսէ. Օրնէ Ինձ: Այս յուզիչ կոչը ուղղակի մեր սրտին կ'երթայ: Անշուշտ մենք անոր եղբայրութիւն պիտի օգնենք, իբր երիտասարդ Ազգ մը, որու քայլափոխները տակաւին անհաստատ են: Եթէ ժամանակին չկրցինք իր դժբաղդութեանց առաջը անեկ, գիտնանք այսօր զայն պաշտպանել և վանան կանգնել իր թշնամիին դէմ: Իր տեղը մեր աջ կողմն է, եւ հիմա, երազի մը մէջէն աչքերուս կ'երեւի գեղեցիկ և լուսնաղէմ և ծովաչեայ նոյն կիներ, որ իր վարսերուն վրայ դրած է փոխաբան գողակ մը. անա հոն կը մխէ շաղարջի մը փոխան դարձի թարուանակ մը, զոր դէպի իրեն կ'երկարին, իր հերոսները, իր բանաստեղծները և իր արուեստագէտները: Ան դէպի Արարատ կը բարձրանայ, անցնելով կանանջազարդ դարեվարներէն, որու կը հետեւին զողովուն և զգայուն շուքեր: Իր յողթոյանմ թափօրը՝ կ'առաջնորդուի երգողներու և պարողներու զատմէ մը: Միացնելով ձեր միտքը իմ վրէժին, այս ջերմ համակրանքին մէջ, զոր ես Հայաստանի հանդէպ ունիմ, զուգ պիտի տեսնէք երիտասարդ գեղեցիկ կիներն որ կը համի ձեր թափօրը գոգաթը առկէ կուգան արշալոյսին շողերը՝ և ուր Տապանը, նոր շրջեղդէ մը յետոյ, զանոնք փրկելու համար, հիւրասիրած է, մարդկային խղճմտանքին այդ աղիւլիները, Բարութիւն, Արիութիւն, Հուսաւք, Աշխատանք, — ասոնք են նոր դարաշրջանի մը աստուածութիւնները, և պաշտպանները ասպետազարմ ապգերու, որոնք հոն բարձր իտէալի այս թագաւորութեան մէջ, պահպանուած երկու հերշտակներէ, — արգարութիւն և ազատութիւն-զրկութեան կ'ընդունուին Հայկական երիտասարդ Հանրապետութիւնը և վերջապէս անոր կուտան խաղաղութեան և սիրոյ համարը:

ԿԱՊՐԻԷՆ ԲԷՎԵՐՍ

Հ Է Լ Վ Ե Ց Ի Ս

ՀՐԳՄԻՆ ԶՈՒԻՑԻՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Կառուցուած 1861 թ. Անմիջական հաստուցում վստուց և նպատաւոր պայմաններ Ընդհ. ներկայացուցիչ Իշիբ ԼԵՒՈՆ ԵՐԱՅՆԱՆ

ՊԵՐԿԱՍԱՅԻ ԴԵՊՐԸ

ԱՎԱՆԱՏԵՍԻ ԿՈՂՄԷ ՊԱՏՄՈՒԱԾ

Մեր ճանաչող բնորոշող վրայ՝ Տ. Հայտնի ան. Գաբրիելյան, հայկ. Պերկասայի Հայոց, քրե. առ. է հեռու-տե-տե, որ հարգար Նկարագրին է Պերկասայի տեսողությունը: Մ. Ս.

Հեղինակներու կողմէ Իզմիրի գրաւման լուրը Պերկասայ հասնելուն պէս, տեղւոյն խլամ բնակչութիւնը անմիջապէս Պոլիս և իր կուսակալութեան հետագիտելիք քաղց լուրին ստուգութեան տեղեկանալու համար խլամ ժողովուրդը և կառավարութիւնը չէթէններու խուճեր կազմել կ'ձեռնարկէին: Պերկասայի հայ ժողովուրդը վախճալ սկսաւ: Թաղական Խորհուրդը և մենք որոշեցինք գայմաքամին գիւմել և հասկնալ թէ մեր վիճակը ինչ պիտի ըլլար: Գայմաքամը պատասխանեց թէ Հայերուն և Հրեաներուն քիթն իսկ չպիտի արիւնի, քանի որ ինք հոն էր: Սակայն այս պատասխանը մեր վախերը չթեթեաց, որովհետև քաղաքի խլամ ժողովուրդին և գիւղացիներուն հրացան և փափուշ բաժնուիլ սկսաւ:

Գիշեր ցերեկ, փողոցներուն մէջ տեսանք որ զինեալ մարդիկ կը պտըտին, և որոնք մեզի ծուռ աչքերով կը նայէին: Թաղական Խորհուրդին հետ միասին որոշում առնելով, մեզ ալ հրացան տան Հայոց թաղը պաշտպանելու համար: Գայմաքամը հրաման տուաւ որ մեզի ալ յանձնեն 8 հատ հրացան մեր թաղերուն պաշտպանութեան համար: Չէթէններ մեզ կ'ըսէին. «Եթէ Յոյները քաղաք մըտան, առաջին անգամ ձեզ պիտի կոտորենք»:

Ուր որ վերջ լսեցինք թէ յիսնապետ Նուրի, յոյն եկեղեցոյն մէջ գտնուող փամփուշտները և ուղեւորները կարկի պիտի առնէ: Անմիջապէս գայմաքամին գիւմելը պատասխան առնելով, եկեղեցիին մէջ գտնուող նիւթեղէնները քաղաքէն հեռու անց մը պիտի փոխադրուին:

Համարձեան օրը, առաւօտուն Պերկասայի հայ, հրեայ և իսլամ բնակչութիւնները շուկայ ելած էին յանկարծ լսուեցաւ ուղեւորու պայթուիներ, ժողովուրդը սարսափահար տուները սպաստանեցաւ: Սր մը վերջ կրկին զուրս ելանք մեր տուներէն, չորս կողմերէն վախով նայելով: Խեղճ հայ ժողովուրդը ամեն վտանգ աչք առնելով աշխատեցաւ գէթ իր զուակներուն օրական հացը հայթաթելու իսլամ հասարակութիւնը կ'որոշէ Հեղինակները հրաւիրելով ստորագրութիւն կըրող խնդրագիր մը կը զրկէ Իզմիր, որպէսզի Յոյները գրաւեն Պերկասայ, մինչև որ միւս կողմէ չէթէններ հետըզհետ կ'չլսանային:

Հեղինակները Յունիս 12 հիւղաբերի առաւօտուն Պերկասայ մտան: Նոյն օրն իսկ գրաւեցին կառավարական շէնքը. հրաւիրող անձնակազմութիւնները շորհակալութեամբ ընդունեցին Հեղինակ բանակը, որ իշխանութիւնը անմիջապէս իր ձեռքին մէջ առաւ: Երկրորդ օրը, լուր մը առինք թէ, չէթէնները պատրաստ ըլլալով յարձակում պիտի գործէին քաղաքին վրայ: Այս մասին ինչպէս բարեկամներէս անգիտութիւններ ստացայ, յետոյ շուտով իմաց տուի հեղինակ հրամանատարին:

Յունիս 21 Շաբաթ օր, մեր սարսափէն չէինք գիտեր ինչ ընենիս, 22 ին՝ տեղեկացանք թէ թուրք չէթէնները յարձակած են ուղեւորները փոխադրող յոյն զինուորներու վրայ և սպաննած են զանոնք: Այն օրը հայ ժողովուրդը բնաւ զուրս չելաւ իր անրիւնի Գիշերը ժամը 11 ին՝ Փափազեան Ստեփան ընտանեօք սպաստանեցաւ եկեղեցիին կիրակի գիշեր, ժամը 3 ին՝ (Ը. Թ.) պատերազմը սկսաւ: Թնդանութիւնը, խորտակեցներ իրենց պայթուցիչներով քաղաքը կը զղրղա-

ցնէին: Ես և Փափազեան Ստեփան, ձեռքերնիս մէջ մէկ զէնք, եկեղեցիին երկու անկյունները կ'սպասէինք ժամը 4 ին՝ 50 գինեալ չէթէններ մտնեցան եկեղեցիին և ըսին. — «Տէրտէր, դուրս ել, քեզ կ'ուզեն» մենք պատասխանեցինք. — «Գուրս չենք ելնոր, մ'ի որ կ'ուզէ տեսնուիլ, թող առաւ, լոյսին գայ: Ասոր վրայ սկսան եկեղեցիին վրայ զէնք պարպել: մենք ալ պատասխանեցինք՝ մեր հրացաններով:

Քանի մը անգամ, նոյն գիշերը յարձակեցան եկեղեցիին վրան. սակայն ոչ մէկ փրսս պատճառեցին: Երկու շաբաթի առաւօտուն չէթէնները կըրկին յարձակում գործեցին մեր վրայ, որու մէջ մենք բաւական մարդու վընաս կրեցինք՝ Պետրոս Յովհաննէսեան սպանուեցաւ, Անթուամ Չանդանեան, Գրեգորի փերեզակ Յակոբ կարապետ Խաչատուրեան, սասիկան՝ կարապետ վերաւորուած են: Սարգիս Տիգրանեան, երկաթագործ՝ Արթին, Մկրտիչ Բաշեան, Յակոբ Պայքէսփրեան հրացանի կոթերու հարուածներու տակ վէրքեր ստացած են: Ծոխ չափ հայոց տունները և խանութները թալանի տուին:

Յոյները երկրորդ անգամ գրաւելու եկան մեզ ազատելու և լոյսնեցին թէ այլևս թուրք խուճանի լսողութիւններէն փրկուած ենք: Ահա այս է իրողութիւնն իր պարզութեան մէջ:

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

«Զ Ա Ր Թ Օ Ն Ք» Ի ՎԻՃԱՐԱՆԱԳԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Ջերմեանդ հիացումով և սրտագին համակրանքով պատհանութիւնն ունեցայ հետեւելու առջի օր «Զարթոնք» Լոյսին. Միութեան Զ. ժողովին, Հոսիսիսիսեան վարժարանի սրահին մէջ: Հսկայ ժողով չէր սա. հետտորական ճաշեր չարասանուեցան հոն, ընդամազ իր պերճաբաններ հոյակապ բառերով տեսակետներ չարգելեցին Սա երկտասարդներու հաւաքով մըն էր լոկ. պատանի ուսանողին ու նորափութ բերաններ միայն պողպոջ բաւերով զարգաբարձին պաշտպանեցին, սակայն հակառակ այս ամէնուն ժողովը պղտիկ կաճատի մը երեւոյթն ունէր. ինչպէս շատ արգարացիքին գետել տուաւ Պ. Պոյաճեան, ու տուէն հայ հարստութիւն մը պիտի զգար տեսնելով հոս ապագայ սերունդը որ կուզէ զարգանալ, կուզէ բարձրանալ անսայթաք:

Առաջին անգամով, սակայն կը գիտէի թէ բաւական հոծ երկտասարդութիւն մը կը պիտի էր, ինչո՞ւ այսպէս, արդեօք... Մեր երկտասարդութիւնը միթէ անտարբեր պէտք էր մնար այս տեսակ կարեւոր շարժումի մը: Արդեօք աւելի լաւ չէ՞ր ընէր փոխանակ անտարժանեցնելով թանկագին ժամերը սպաննելու, եթէ չուրաթը զոնէ տուաւ են երեք ժամ զոհէր այս գիտական հաւաքովիին, որ միւսնոյն տեսն անուշ գրասանք մ'ալ է:

Վիճարանական ժողովներու պակասը մեծապէս զգալի էր մեր մէջ բաւական տեսնէ ի վեր: Երկտասարդութեան մտային զարգացումի զօրաւոր ազգակ մը կը պիտի էր մէջ: «Զարթոնք»ը լրացուց այդ պակասը: Սրտապիւն կը շորհակալութեամբ պատասխանեցաւ և յորդոյ անգամները, թելազերել միանգամայն շարունակել անվատ այս ուղղութիւնը, և կը հրաւիրեմ Չմիւսնեան ընդհ. երկտասարդութիւնը մասնակցիլ սոյն օգտակար ժողովներուն:

Գ. Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՏՕԳԹ. ՆԵՒՐՕՍ
ՎԻՐԱՐՈՅԹ — ԱՏԱՄՆԱՐՈՅԹ
Բարիկ ստամբուրուական զարգէն վկայեալ Նախկին վերաբոյժ — ստամբուրոյ թուրք (Պրատես) հիւանդանոցներուն — **Նապը փողոց բիւ 27 - ԻՋՄԻՐ** — Հիւանդ կ'ընդունի ամէն օր առաւօտ ժամը

Մ Ա Մ Ո Ւ Լ

«Ա. Մամուլ» 10 Յունիս Հինգշաբթի օրուան մեր հեռագիրներուն բաժնին մէջ հրատարակած էինք Գնդ. Հէսքէլի գիրքթաթօրութեան վրայ: Գնդ. Հէսքէլի գիրքթաթօրութեան վրայ կը քաղենք հետեւեալ մանրամասնութիւնները այդ մասին. —

Ամերիկեան բանակի Գնդ. Հէսքէլ այսօր (8 Յունիս) անուանուեցաւ Հինգերու խորհուրդին կողմէ լիազօր պատուիրակ Հայաստանի. խիստ ընդարձակ իրաւասութիւններով: Գնդակտը անմիջապէս պիտի երթայ Հայաստան ուր պիտի զբաղի թուրքերու կողմէ տարապարտած հայերու ներգաղթով: Գնդ. Հէսքէլի Հայաստան ուղարկուելը, նոյնանման է այն պաշտօնին որ տրուեցաւ նախագահ Թափթի, Յիլիպիան կղզիներու վարչութիւնը կանոնաւորելու համար:

* Տէրինճէէն Պատրիարքարան հասած տեղեկութեան մը համաձայն, զարմնի ուժեր փորձած են հրկիզել Ամերիկեան այն որանները որոց տակ կը պատասխարուին հայ որբերը: Նոյն փորձը ըրած են երկու անգամ Օրթա գիւղի որբանոցին վրայ: Հրձիգութեան փորձ մըն ալ կատարուած է Պատարգի որբանոցին վրայ, սակայն շորհիւ աշխուրջ հսկողութեան ատոնք անհետանք մնացած են:

* «Թայմզ» հրատարակած է խմբագրական մը, ուր անհրաժեշտ կը նկատէ այդ շրջաններուն զինուորականապէս գրաւուելը Պողոս Նուպար նամակով մը շորհակալութիւն յայտնած է «Թայմզ»ը, ուր կը կին անգամ շեշտած է այս խնդրին կարեւորութիւնը:

* Յունարէն թիւթ մը կ'ըսէ թէ աւաղակախու մը յարձակած է Սալիկի նահիէ միւսալերին վրայ, որ հայ մըն է:

* Պ. Ժէրօրտի հարցման ի պատասխան, ծերակուտական Լօճ յայտնած է որ ինք մեծ ուրախութեամբ ծերակուտին պիտի առաջարկէ բանաձեւ մը Հայաստանի անկախութեան ի նպաստ: Մ. Լօճ պիտի ջանայ իր նոր բանաձեւին մէջ մտցնել հասուած մը, որուն խառնուրդ պիտի ըլլայ աշխիցիլ հայերուն՝ կողմելու համար իրենց կառավարութիւնը: Յանձնարարութեամբ նախկին նախագահ ծերակուտական Հիւքօք և երկու մեծ հանրապետական ծերակուտականներ առաջարկած են իրենց ծառայութիւնը Հայաստանի անկախութեան գտնին ի նպաստ:

* Անգլիական խորհրդարանը առաջին ընթացքում իսկ վաւերացուց խաղաղութեան զանապիւրը և ձրանք. Անգլ. համաձայնապիւրը:

Տեղական Լուրեր

ՈՒՐԻՍԹ օր Իզմիր հասաւ, կեսօրէ վերջ ժամը 4 ին՝ միջոցները, «Բէլջօքնէկ» նաւով, յունական բանակին սարսափեալ, զօրավար Բառասէկօրուր Անմիջապէս բարի գալտեան գտցած են Իզմիրի մեարսալու լիտ Գեր. Խրիստոթօս — թաղական խորհուրդի անդամներով, գրաւման բանակի հրամանատար զօր. Նիտէր, Մ. Կուստուրօքի և Նանիպ զատէ Ալի պէյ, հեղին բարձր գովաբանութեան ներկայացուցիչները բարձրատիճան սպաններ, և այլն:

Զօրավարը իր սցեներներուն շորհակալութիւն յայտնած է պղտիկ ձառով մը որու պատասխանած է Գեր. Խրիստոթօս: Յետոյ զօրավար Բուրասէկօրուր ցամաք երած է իտուր լազուրութեան մը խանդաղատալի ցոյցերուն տուրկայ գասնորով:

Իր բնակարանէն (Միլանիոյի փողոց) մէջ իրեն այցելած են զօրանոցի հեղին սպանները, որոնց սպարապետը, իրենց կատարած քաղաքորութեանց համար շորհակալուած է:

Պ. ԱՆԴՐԵԱՍ ՅՈՎԻԿԻՍԵԱՆԻ խաղաղութեան զանապիւրը:

խաղաղութեան զանապիւրը, և զրամարկը տարած: Այսօր Պ. Յովակիմեան մեզ կը տեղեկացնէ թէ, արկղը գտնուած է, հիւանդարի շրջակայքի գաղտնուած մէջ թաղուած: Այս առթիւ պարտ կը համարի հրապարակաւ յայտնել իր շորհակալութիւնները հանգէպ հեղին ուստիկանութեան, որ յաջողած է ձեռք ձգել նաև գողերը, և քանի մը օրէն խոտաացած է վերադարձել գրամարկի պարտեանկած թանկագին իրեղէնները և արժէքները:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ օր Յունիս 14, հանգիստ օր արարողութիւն մը տեղի պիտի ունենայ Ս. Բոլիբարդ եկեղեցոյն մէջ: Ֆրանսական Ազգային Տօնին առթիւ: Ներկայ պիտի գտնուին Ֆրանսանոց. հիւպատոսը իր պաշտօնական մարմիններով հիւպատոսարանին սպանները, մասնաւոր տեղիք յատկացուած են Ֆրանսացուցեալ Ֆրանսական հպատակներուն համար:

ԱՅՍՕՐ կէսօրէ վերջ ԱՅԻՄԵՐԻԱ թատրոնին մէջ (Բաթէի կից) պիտի ներկայացուի Լէպլէպիճի Հօր-Հօր ազատ օրէնթը յոյն թատերախումբին կողմէ: ՄԻՏԻԼԼԻԻ թերթերուն գրածին համեմատ, Մ. Բարսեղօրուր, Յունաստանի արտ. գործոց նախարարութեան քարտուղար, Սյալալզի հեղին բարձր ներկայացուցիչ անուանուած է, փոխանորդելով աթթ. վէրվօսի:

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

Ա.Զ.Գ. ԿԵՒՐ. ՈՐԲԱՆՈՅԻ
Վարչական խորհուրդ ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները, որոնց համար կը փութայ հրապարակաւ յայտնել իր խորին շորհակալութիւնը:

Որդեգրութեան	
Ղուկաս Եսայան Ծրղ.	1. 0.
Սրգ. 2րդ Յամա.	125
Սոսրով Գալստեան 1 որդ.	
2րդ եռամսեան	25
Միհրան Միհրանեան 1 որդ.	
2րդ եռամսեան	25
Աղբիւ-Մայն անգլաներ	
Զարեհ Սարգսեան	4
Մարտիրոս Մովսէսեան	4
Միհրան Եսայան	4
Գրիգոր Զաքիան	2
Միքայէլ Պալեան Մյ. առ.	2
Յիւր. Աղամճեանեան	1
Յանէն անգլաներ	
Երուանդ Մելիքեան	4
Պապեան և Էլմասեան	4
Հմայակ Բէլէճեան	3
Եղարթ Յարէթեան	3
Միհրան Բուսեան	2.50
Կարապետ Թանթապուրեան	2
Սի. քիսս Սիւքիսեան	2
Արաք. Փափազեան	2
Յակոբ »	2
Յովհաննէս Ունճեան	2
Ա. միւսակ Գարազաչեան	2
Աղաթօն Կարիկեան	2
Գ. ձէլէպեան և Ընկ.	2
Հայկ Շահինեան	2
Սարգիս Ունճեան	2
Միքոն Հալաճեան	2
Աւետիս Փիլաւեան	1
Յիւր. Մարտիրոսեան	2
Լուիսիկ Գարգիլեան	1
Մկրտիչ Էրթէլթեան	1
Կարապետ Անդրանիկեան	1
Թովմաս Աւետիսեան	1
Աւետիսեան Եղարթ	1
Արմենակ Գրիգորեան	1
Յովհ. Մարտիրոսեան	50
Նշան Բէլէպեան	50
» Պալեան	50
Արշակ Պիպերճեան	50
	240.50

Ի զիմաց Ազգ. Կեդր. Արքայացի Վարչական Խորհրդի Գանձապետ ՍՈՒՐ ԹԱԳԻՆԻՍԻԱՆ

Գ ԵՐ Զ Ա Կ
ՄԻՔԱՅԵԼ Մ. ՊԱԼԵԱՆ
ՉՈՒՇԱ ՊԵՏԵՍՅԱՆ Ի. 11
Կը գրատրաստէ ամէն շաբաթ և տեսակի վրայ հապուսներ ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեանց համաձայն Գիւղերը միշտ պոհ կ'ընեն և փոխարէն:

ԱՐՁԱԳԱՆԳ

ԱՄԵՐԻԿ. ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ

Երէկ պատու ունեցանք ընդունելու Ամերիկեան Իրմիթի նպատակով տոյց մարմնոյն անդամներէն Տօքթ. Ռիչարտսոնու հետ կէսօրէ առաջ ասակցութիւն մը ունեցանք: Յարգելի Տօքթոր Իզմիր հասած է Բլիթֆի կեդրոնին եղած ինչ ինչ զիտողութիւններու վրայ քննութիւն մը կատարելու: Անշուշտ Տօքթ. Ռիչարտս անաչառ քննութիւն մը պիտի հաճի ընել, և արդար տեղեկագիր մը տալ, անգամ մըն ալ շեշտելու համար որ բացի երկու տիկիններէ, մնացեալներն ամենքն ալ շեղած են իրենց ստաքելութենէն, որ էր օգնել Հայ, Յոյն և Սուրիացի կարօտեալներուն Միւս կողմէ ապահովենք որ Տօք. Ռիչարտսը զրուստալից տողերով իր տեղեկագիրն մէջ պիտի յիշատակէ Տիկին Վէնէթընը՝ կեդր. Որբանոցի Տեսչուհին, Տիկին Հէտլին՝ հայ աղջկանց պատրաստանի տեսչուհին որոնք անձնուէր մայրեր եղան և Հայոց ցաւին ցաւակից, տառապանքին՝ վշտակից ցտնուեցանք և անձնուիրարար նուիրուեցան ամբողջ համար Հայոց տառապեալ որբերն ու որբուհիները: Իզմիրի հայութիւնը երբէք չպիտի մոռնայ այդ երկու անձնուէր տիկիններու նուիրարբերումը և ի՞նչ որ մը անոնք ուզեն մեկնել և հրաժարիլ իրենց պաշտօններէն, Հայերը չպիտի թողուն զիրենք որ հեռանան և ապահով ենք որ Հայոց այս թախանձանքներն լսելի պիտի ըլլան անոնց կողմէ: Տօքթ. Ռիչարտս որ ուղղամիտ և խոհուն անձնաւորութիւն մը կ'ընէր, անշուշտ պիտի ըմբռնէ թէ՛ ինչ ցաւալի կորստաւորներն ստած են տեղուոյ մէջ Բլիթֆի գործառնութիւնները և ըստ այնմ պիտի գործադրէ հարկ եղածը: Այս մասին թերեւս ստիպուինք կրկին անդադարեալ մտքի մէջ չթողնելու համար որ և է բան և լուսաբանելու համար այս խնդիրն իր տեղ մերկութեան մէջ:

Հ. Յ. Գ.

Երէկուան Հարկուի մէջ հաստատարակուած Հ. Յ. Գ. Իզմիրի կօմիտէի «Բացատրութիւն մը վերնագրով յայտարարութիւնը չհրատարակեցինք, նոյնիսկ կօմիտէն հակասութեան մէջ չզննելու համար, որովհետեւ լեւոնի խնդիրն փակուած նկատուի յետոյ, վայրը կ'ընայ մէկ ու կէս տարուան մասին խնդիր մը որու շարունակութիւն է իր փակած լեւոնի խնդրը: Ասկից զատ մէկ կողմէ համերաշխութիւնն չխանդարուի կ'ըսուի և միւս կողմէ նոր բաներ կ'ստեղծուին անորմէն: Ինձեզեան Սրբազանիզուտ անձնական չպատասխանատուութեան տակ տերեւ մը շարժած չըլլալը կ'կարծէինք որ գիտէին, այժմ պիտի գիտնան, քանի որ չեն չգետեր եղեր, և անոնց որոց սիրոյն լեւոնի խնդիրն չեն ուզեր քրքրել, այսչնոր խնդիրն բանտում կ'ան պիտի յանգին, թո՛ղ ապահով ըլլան:

Ահ, այս նկատմաներով, որոնք արդէն բերանացի բացատրեցինք, երբ այդ բացատրագիրն մեզի բերուեցաւ, յարմար չգտեսցինք հրատարակել և իրենց ալ ըսինք, ուստի Յ. Գ. ր աւելորդ էր:

ԴՐԱՄ ՈՉ ԹԷ ԱՊՐԱՆԻ

Կովկաս զրկուելիք նպատար ստաւելագոյն չափով իր նպատակին ծառայեցնելու համար, մեր կարծեօք ու մեզի հետ բոլոր ողջամիտ դասակարգին կարծիքով, որոնք չեն յարիր Պ. Ս. Իփլիքեանի կարծիքին, պէտք է որ զբամ ըլլայ կրնայ հոն զրկուելու ցահատիկ, համակարծիք ենք, բայց որովհետեւ անկարելի է, ուրիշ որևէ ապրանք զրկել անխոհեմութիւն պիտի ըլլար: Մասնաւորապէս պնդող ամերիկացիներն որոնք են, արդեօք անոնք որ հայերու, յոյներու և սուրբա-

զրկուեցան և որոց գործունէութիւնն քննելու համար մասնաւոր քննիչ մը զրկուեցաւ Պոլսէն և թերեւս վաղն ալ հասնի հատ մը Ամերիկայէ...

Հ. Կ. ԱՆՉ

Հայ կօմիտի Խոշի հեռուեալ նուիրատուութիւնները եղած են: Բարեւոյ Ուն, (Հարկուի միջոցաւ) Տ. Օրբ. Աղաւնի Յարս. Թիւնեան, Մարի Համրարձու մեան: Պէտքիս Բէշլիեան, Ռօզա Յակոբեան, Տ. Մանուկ Չաքարեան, Պ. Պ. Եօրեի Չաքար, Պաշիկ Մաթիկեան 1 սկան ոսկի, Պ. Յովհ. Ա. դասեան 1 ո.

ԼԷՊԷՆՆԱԿԱՆՆԵՐ

Իզմիր գտնուող բոլոր Հայ Լէպէտնակներէ կը խնդրուի ներկայ ըլլալ ժամը 5ին (կ. ե.) Հարկուեանի սրահը, «Չարթօնք» յարանական միութեան կողմէն իրենց ի պատու տրուելիք թէյասեղանին: Չինուորական հագուստ կրել անհրաժեշտ է:

ՅԵՐԵՎԱՆԻ

Այսօր ժամը 10 ին (կ. ա.) Հօիֆսի մանի սրահին մէջ տեղի կ'ունենայ «Չարթօնք» լսարանական միութեան Դրդ զբաղան գեղարուեստական ցերեկայիքը:

Պիտի բանախօսէ Պ. Տ. Վարդանեան նիւթ ունենալով՝ «Մեր միջավայրը և տարաբնուութիւնները»: Արատասնութիւններ պիտի ըլլան Օր. Ս. Ունեանէ և Պ. Ա. Պահարեանէ Դանիէլ Վարուժանի գործերէն:

Նուագ՝ զաշտակ, սրինգ, և ջութակի վրայ Օր. Թ. Սահրիչեան, Պ. Պ. Յ. Մինասեան, Յ. Աղալարեան և Մ. Գարագոչէ: Մարտի 1-ը և կ'ինչուրուի պատիկներ չբերել:

ՄԵԿՆՈՒՄ

Օսմ. կայս. Պանքայի Պոլսոյ ընդհ. տնօրինութեան անդամներէն, Իզմիրցոց ծանօթ գէմք մը Պ. Պերճ Բէրէսթէճեան որ ժամանակէ մը ի վեր քաղաք կ'գտնուէր շարժուած մէջ մեկնեցաւ իր Պաշտօնատեղիին: Պ. Բէրէսթէճեան որ Իզմիրի մէջ ունի բողոքութիւ հայ և օտար բարեկեցիներ ողջերթ մաղթելու համար փութացած էին շոգնուալ:

ԱԳՆԻՍԱՐԻ ՄԷՋ

Ագնիսարի մօտերը Մտրմարա գիւղը չէթէնի իջած և Յոյներէն 1500 ուկի պահանջած են, որոնք ոսկի չունենալով, բոլոր իրենց ոսկեղէնները յանձնած են: Ասոնք թուրքերէն եւս 3000 ոսկի պահանջած են: Հրոսակներուն պետը յանձնարարած է Յոյներուն մեկնիլ, հակառակ պարագային սպառնացած է անոնց աղջիկները առեւտնել: Յետոյ անոնք առեւտնեցած են Անաթոլի Եօրկիի տղեկը, որու ինչ բոլոր յայտնի չէ:

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Մանիսացի եւ միթի Կիրակոս Պալէրեան ասկից 1 տարի առաջ շամի Մէզէ հիւանդանոցը կը գտնուէր կը խնդրուի տեղեկութիւն ունեցողներէ իմացնել խմբագրութեան:

Մանիսացի Ասատուր Նիկողոսեան 4 տարի առաջ գինուր գացած և Սաչատուր Նիկողոսեան, պատերազմէն առաջ Ամերիկայ կը գտնուէր:

Պալքեւեցի, Թէօփի Ալուսիկարիեան և Արմենակ Իսրայէլեան որոնք Ամերիկա-Միլիտարիս կը մեկնէին:

Պալքեւեցի Մարեամ Ալուսիկարիեան, և իր որդիքը, Յարութիւն Գրիգոր Անիկ և Կրէստիմ:

Արաբկերցի Փիլիպոս Մէլիքեան, Եղիպտոսէն, Սեդրակ Մէլիքեան Ատաւնա Տաւրոսի մէջ կը գտնուէր: Սարգիս Մէլիքեան ու Բարիկ էր:

Եօզղատէն Բումսիկի գիւղէն, թորոս Գայսերեանը կը փնտէր Կեսարիէն աքորուած իր եղբայրը Մանուկ, տղաքը Յարիթ և Յաւութիւն: Եօզղատ. Թումսիկի գիւղէն Մարթա Գայսերեանը կը փնտէր այն տեղէն աքորուած ամուսինը Աւարիկ երկու տղաքը Կարապետ և զինուոր գացած Պետրոս Գայսերեան:

Եօզղատ. Բումսիկի գիւղէն Հաճի Պիփօնեան կը փնտէր Կեսարիէն աքորուած եղբայրը Դրիգոր Պեօնեան ընտանեօք:

Կը խնդրուի իմացնել խմբագրութեան:

ԵՐԷԿ ԵՐԵՎՈՅԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

4. Պոլիս 12 Յուլիս 1919

Պոլսոյ մէջ պատահած վերջին հրդեհին հրկիզեալներուն, Համաձայնական ներկայացուցիչներուն, մասնաւոր Անգլիոյ կողմէ սկսուած է բաժնուիլ ուստասեղէն և հագնելիք:

Պոլսոյ Ֆրանս. գինուորական ներկայացուցիչները, մայրաքաղաքին մէջ յաճախակի պատահող հրդեհներուն առաջին անգամ համար, Բարիզէն ուղարկուած են զանազան մեքենաներ, որոնք արագօրէն կը մարեն ու և է կրակ:

Երբոր դաշնագիրը խորհրդարաններէ վաւերացուի, Ֆրանսի մէջ գըրաքննութիւնը և պաշարման վիճակը պիտի վերցուին:

Վրաստանի և Ասորպատականի կառավարութիւնները կնքած են զինակցութեան մը, Ռուսական հաւանակոն արշաւանքի մը գէմ, զօր. Տէնեքինի բանակին կողմէ: Այս զինակցութիւնը երէք տարի պիտի տեւէ և ունի կարգ մը պաշտաններ՝ սահմանները իրաւաստութեամբ կարգադրելու, և զիւանագիական գործերու վերաբերեալ Անգլիոյ վրաստանի Գ. հանրապետութիւնը՝ Երեւանի այս դաշնագրին պաշտօնական հրատարակութիւնէն միջև 15 օր իրաւունք ունի միանալու այս զինակցութեան:

Մ. Ուիլսոնի ձեռնարկով վաղուան նիստին մէջ պիտի արտասանէ ճառ մը խաղաղութեան դաշնագրին և ազգերու ընկերակցութեան վրայ: Մերակոյտը դռնբաց պիտի ըլլայ:

Հոլանտի գահաժառանգը «Տէյլի Մէյլ» թղթակցին յայտարարած է թէ, գերման կառավարութիւնը հաւանած ըլլալով քայլերին չգատավորութեան, Հոլանտո գաւառութիւն չպիտի յարուցանէ վիճելի յանձնուած գործողութեան պահուն:

Բարիզէն հասած վերջին հեռագիրները կը տեղեկացնեն թէ, դաշնագիրը վաւերացուած ըլլալուն համար, Համաձայնականը չպիտի յապաղին Գերմանիոյ պաշարումը շարքեցնելու ներստութեան վերաբերեալ առնուած որոշումներն մօտ օրէն հրատարակութեան պիտի տրուին:

Վիլհելմ կայսեր Գ. զատակը, Այթէլ Ֆրէտրիխ, հետեւեալ հեռագիրը ուղղած է Անգլիոյ թագաւորին. «Կատարած ըլլալու համար զաւելի և սպայի բնական պարտականութիւնը, ի՞նչ չորս պղտիկ եղբայրներու հետ կը գնեմ Ձեր վեհափառութեան հրամանին տակ, մեր հօրը տեղ, որ գատապարտուած է յանձնուելու Ձեզի: Այս առաջարկը կ'ընենք մեր յօժար կամքով խնայելու համար անոր անպատուութեան սուգնապը»: Իշխան Հանրի տը Բրիւս այսօրինակ հեռագիր մը ուղղած է Անգլ. թագաւորին, որով կը խնդրէ իր եղբորը, Վիլհելմ Հօհենցոյի թի տեղ գինիքը դատել:

ՏՊ. Յ. ԳԱՐԱՆԵԱՆ ՄԱՍՆԱԳԷՏ

ՆԵՐՔԻՆ, ԿԱՆԱՆՑ ԵՒ ՏՂԱՅՈՑ Հիւանդանոցներու Հիւանդ կ'ընդունի բացի կիրակի ամէն օր: Առաւօտ ժամը 10. 12 ին և Կ. ետք 3-5. ՊԱՇՏՈՆԱՅԵՂԻՆ.— Հայոց բաղ Մօսա փողոց թի 51.

ՔԷՆՏՈՐՈՒ ԲԱՆՆՈՒՑԻՍ

ՋՐԱՐՈՒԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՂՆԻՔՆԵՐ Զբարժութեան և Մասածի օգտակարութիւններն ամեն տեսակ հիւանդութեանց համար անփութելի են: Այս տեսակ հաստատութիւնէ մը պիտի փութան անշուշտ օգուտիլ ամէն սեռի և հասակի անհատներ. ուր հաստատութիւնն ունի նաեւ իր ներքին բժիկները: Բէշլիոյ փողոց, նոր փառն գիւմար՝ Ֆրանսոյ փողոց թիւ 19, 32

ՏՊ. Ա. Խ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Իրարոյց և ակնարոյց Հայերու ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԵՐԿԱՆԴԱԿԱՆ ԶԱՄԱՆԱՐԱՆԵՆ և ԼՈՏՏՈՒՆ ԱՐՔ. ԱԿԱՐՈՒԺ. ՀԻՆԱԿԱՆՈՒՅԵՆ ԹԵԹԵՆ ու ծանր ամէն տեսակ վիրաբուժական գործողութիւններ կ'կատարէ կանանց և այրերու: ԱԶԳԻ ՎԵՐԱՐՆԵՐԱՆ, գարմանումներ և գործողութիւններ, ինչպէս նաեւ գիտականօրէն ակնոցի չափեր կ'որոշէ: Իրենց գալիք հիւանդներուն մասնաւոր կարգադրութիւններ: Հիւանդներ կ'ընդունուի, բացի կիրակիէ, ամէն օր կ. ա. ժ. 9-12 կ. ե. ժ. 2-5 իր բնակարանը Բէշլիոյ ճատտէ թիւ 40 (Պ. Պալքեւեանի տունը):

ՏՊ. ՄԻՆԱՆ Ա. ՎԱՐՊԵՏԵԱՆ

ՊԷՐՈՒԹԻ ՖՐՆ. ԲԺՇ. ՀԱՄԱԿԱՆԱՐԱՆԵՆ Մ Ա Ս Ն Ա Գ Է Տ Ներքի և Բէշլիոյ հիւանդանոց: Հիւանդ կ'ընդունին ամէն օր Հայնոցը Պ. Չարիկ Շտրաւարտի գեղարանը ստուշա ժ. 9-10 և Կ. ե. ժ. 3-5: Ուրբաթ օրերը ձրիաբար կ'նայի հիւանդներ: Հաստատուած է Հայոց Մէհկարէ փողոց թիւ 43:

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

4. Պոլիս 13 Յուլիս 1919

Թիւսու հազար Հայեր Մօսքուաի շրջականերէն Հայաստան երթալու համար արտօնութիւն ուղարկուած են պօշիկիք կառավարութիւնէն, որ ընդունած է անոնց խնդիրը և Տանիմարքայի կարմիր խաչը ստանձնած է անոնց փոխադրութեան միջոցները:

Բարիզէ վերադարձած հայ պատգամաւորներէն Դուրեան Ա. ի տուած տեղեկագրին վրայ բացատրութիւններ ստանալու համար Ամերիկեան Գոնկըն (1) գաղտնի խորհրդակցութիւն մը պիտի ունենայ:

Բարիզէ կ'հեռագրեն թէ Փոքր-Ասիոյ խնդիրներու մասին հաշտութեան համաժողովին մէջ յատուկ յանձնախումբ մը կազմուած է:

Այս յանձնաժողովը Անգլիոյ կողմէ Լօրտ Միլնէր, Ամերիկայի՝ Գնդ. Հաուզ, Ֆրանսայի՝ Մ. Բիշոն, Իտալիոյ՝ Մ. Բրէսքի և Ճաբոնի կողմէ՝ Մ. Ճինտա կազմած են որոնք պիտի որոշեն Փոքր-Ասիոյ զանազան ազգութիւններու տրուելիք հովանաւորութիւնը:

Աթէնքի մէջ գրամատուաններու բոլոր պաշտօնէութիւնները գործադուլ հռչակած են:

Բարի կողմէ Հաշտութեան համաժողովին նոր պատուիրակներ պիտի զրկուին վատիկանի շահերը պաշտպանելու համար:

Իտալացի կարգ մը երեսփոխաններ Ֆիուլիի Իտալիոյ կցուիլը կ'պահանջեն և Չորսերու խորհուրդին մէջ որոշուած է զրկել 4 զինուորականներ: Լէնինի՝ Ռուսմանիոյ և Կոլչաք Ուքրանիոյ մէջ ապահովութիւն մը ստանալու համար Պետարապիան Ռուսմանիոյ թողնելու առաջարկներ ըրած են: